կացիրը աւելացնում է, որ այդ հրէան շատ անգամ այս տեսակ անկարգութիւնների առիթ է տուել եկեղեցու բակում։

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. չը նայելով, որ այս տարվայ բերքը շատ առատ էր, բայց բախտախնդիրների մի մեծ խումբ սկսել է գիւղերում ցորեան հաւաքել ձմեռը թանգ գնով վաճառելու նպատակով։ Այս պատճառով ցորենի սոմարը յանկարծ 28 րուբլուց բարձրացաւ 31 րուբլի, իսկ գարու սոմարը 15-ից բարձրացաւ 18 րուբլի։ Եթէ այսպէս շարունակվի անցեալ տարվայ սարսափելի թանգութիւնը կարող է կրկնվել։ Գաւառապետը խիստ միջոցներ ձեռք առեց չարչիների չաչախնդրութեան առաջն առնելու համար, հրամայելով շինական տանուտէրներին արգելել չարչիներին ցորեան ամբարել թանգ գնով վաճառելու նպատակով։

ԲԱԴՈՒԻՑ մեզ գրում են. թէ «Մարդասիրական ընկերութեան» օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրել է Թիֆլիսից մի վարժուհի, և վարժուհին հոգաբարձութեան հրաւէրքի վրա յոյս դնելով, գնացել է Բագու, բայց չը նայելով, որ մի ամիս անցել է, նրան պաշտօն չեն յանձնում և խեղճ վարժուհին մնացել է մի օտար քաղաքում անգործ։

ԴԵՐԲԵՆԴԻՑ մեզ գրում են. այդ քաղաքի հայերը ոչինչ առաջադիմութեան նշան չեն ցոյց տալիս։ Ինչպէս էին պարսից տիրապետութեան ժամանակը, նոյն անշարժութիւնը, նոյն անկրթութիւնը պահպանել են և այսօր։ Այդ քաղաքում ընտանիքի մէջ մինչև այսօր տիրապետում է թուրք լեզուն։ Դպրոցներ ունեն, բայց անունով միայն. հին և նոր սերունդը ոչինչ չեն զանազանվում միմեանցից։ Բոլորի վրա տիրում է վաղեմի տգիտութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԺՈՒՐՆԱԼ ԴԸ ՍԷՆ-ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳ» ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾԸ

«Ժուրնալ դը Սէն-Պետերբուրգի» լրագրի մէջ սեպտեմբերի 25-ին տպված էր հետևեալ յօդուածը։

Լրագիրները հաղորդեցին, որ Բ. Դուռը ժամանակ խնդրեց Եւրոպայի ցանկութիւններին պատասխանելու համար և այդ ժամանակը նրան տրվեցաւ։ Այդ ժամանակը լրանում էր հոկտեմբերի 3-ին։ Եւ ճշմարիտ Կ. Պոլսից «Րէյտերի» ընկերութեանը ուղարկած հեռագրի համեմատ, Թիւրքաց կառավարութիւնը հոկտեմբերի 4-ին ուղարկեց դեսպաններին մի գրութիւն, որով յայտնում է, թէ զիջելով Եւրոպայի ճնշմանը, մտադիր է պայմանաւորվել քննութեան ենթարկված բոլոր հարցերի վերաբերութեամբ։ Տեսնենք Բ. Դուռը ինչ է անուանել զիջանել Եւրոպայի ճնշմանը և ինչպէս է կամենում պայմանաւորվել վիճելի հարցերի վերաբերութեամբ։ Ամենանշանաւոր Դուլցինիօի հարցի մասին Բ. Դուռը ասում է, որ կաշխատի համոզել ալբանցիներին, որ նրանք Դուլցինիօն յանձնեն Չեռնոգորիային։ Այդ կը նշանակի, որ ալբանցիները չեն ենթարկվում Թիւրքաց կառավարութեան իշխանութեանը և որ Բ. Դուռը կը խնդրի և կը համոզի իր հպատակներին անել այն, ինչ որ նրանք չեն կամենում անել։ Այդպիսով դարձեալ բարձրանում է վարագոյրը ալբանական կոմեդիայի, որ վերջացած էր համարվում այն ժամանակից, երբ Ռիզա-փաշա պատասխան տուեց Չեռնոգորիական իշխանին։ Այս դեռ բոլորը չէ. եթէ Թիւրքաց կառավարութեանը կաջողվի յաղթել իր ալբանցի հպատակների անհնազանդութիւնը, Բ. Դուռը կը տայ Դուլցինիօ յայտնի պայմաններով։ Ի՞նչ պայմաններ են դրանք. երևի այնպիսիները, որոնք համաձայն չեն պետութիւնների նպատակների և ցանկութիւնների հետ։ Ուրեմն Բ. Դռան վերջնական պատասխանը ստանալուց յետոյ Դուլցինիօի հարցի վերաբերութեամբ, գործը նորից պէտք է սկսել։ Դրան հետևում է Թիւրք-յունական սահմանական նոր գծի հարցը, որ Կ. Պոլսի պետական մարդկերանց կարծիքով դեռ ևս վճռված չէ։ Բայց մեր կարծիքով Բերլինի մէջ բոլոր պետութիւնների ներկայացուցիչները մի կոնֆերենցիա կազմեցին այդ հարցը վճռելու համար, որովհետև Թիւրքաց և յունաց կառավարութիւնների երկար և դժուար բանակցութիւնները ոչինչ հետևանք չունեցան։ Այդ կոնֆերենցիայի վճռի համեմատ Թիւրք-յունական նոր սահմանները այնպէս են որոշված, որ Եանինա, Մեցօվօ և Լարիսսա Յունաստանին են մնում. Բայց, ինչպէս մենք հասկացանք «Րէյտերի» ընկերութեան հեռագիրը, Թիւրքաց գրութիւնը հոկտեմբերի 4-ից այնպէս է որոշում նոր սահմանը, որ Լարիսսա, Մեցօվօ և Եանինա Թիւրքիային է մնում. Ուրեմն Բ. Դռան վերջնական պատասխանը ստանալուց յետոյ, Թիւրք-յունական սահմանների վերաբերութեամբ պէտք է գործը նորից սկսել։ Շարունակութեան մէջ գրութիւնը յիշում է այն վերանորոգութիւնները, որոնք պէտք է մտցնել Հայաստանի մէջ և դրա համար Բ. Դուռը երեք ամիս ժամանակ է պահանջում։ Մեզ չեն ասում, թէ ո՞րոնք են այն վերանորոգութիւնները, որոնց Բ. Դուռը պարտաւորվեցաւ անյապաղ իրագործել Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի համեմատ, որ ստորագրված է 1878 թուի օգոստոսի 3-ին, ուրեմն աւելի քան թէ երկու տարի սրանից առաջ։ Մեզ չեն ասում նոյնպէս, արդեօք Թիւրքաց իշխանութիւնը կը գործադրէ՞ այնպիսի միջոցներ, որ «հայերով բնակեցրած նահանգների տեղական պէտքերի համեմատ վերանորոգութիւնների և բարելաւութիւնների իրագործելուն» չը խանգարեն նոյն քիւրդերը և չերքէզները, որոնց յիշում է Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածը և որոնց բռնաւորութիւնների դէմ Բ. Դուռը պարտաւորվեցաւ պաշտպանել հայերին։ Ուրեմն հայերի վերաբերութեամբ Բ. Դռան տուած վերջնական պատասխանի մէջ բացի անորոշ խոստմունքներից ոչինչ չը կայ։ Վերջապէս Բ. Դուռը խոստանում է վերանորոգութիւններ մտցնել Թիւրքիայի եւրոպական մասի մէջ այն չափով, որը համեմատ կը լինի պետութեան ամբողջութեանը և եթէ այդ գործի մէջ Թիւրքաց կառավարութիւնը իրան միակ դատաւոր է համարում։ Ինչ կը վերաբերի Թիւրքաց արժէթղթերի տէրերին, որոնց մասին հոկտեմբերի 4-ի գրութեան մէջ Բ. Դուռը առանձին հոգատարութիւն է ցոյց տալիս, նրանց տէրերը կը հրաւիրվեն իրանց ներկայացուցիչներին ուղարկել Կ. Պոլիս։ Մեզ մնում է աջողութիւն ցանկանալ այդ ներկայացուցիչներին։ Այժմ մնում է մի քանի խօսք ասել Թիւրքաց կառավարութեան գրութեան եզրակացութեան մասին, որ հետևեալն է. «Այդ վերանորոգութիւնների իրագործելու համար Բ. Դուռը պահանջում է, որ պետութիւնները հրաժարվեն ծովային ցոյցից»։ Յամառութեան և ծաղրածութեան կողմից այդ եզրակացութիւնը, մեր կարծիքով, խոհական գիւտ է։ Ուրեմն Բ. Դռան կարծիքով, այն իրողութիւնը վարձատրելու համար, որ Բ. Դուռը կաշխատի համոզել ալբանցիներին յանձնել Դուլցինիօ, այն իրողութիւնը վարձատրելու համար, որ Թիւրքիան ուշադրութիւն չէ դարձնում Բերլինի կոնֆերենցիայի վճռի վրա, որ Հայաստանի և եւրոպական Թիւրքիայի վերանորոգութիւնների մասին Բ. Դուռը քօղարկվում է անորոշ խոստումներով, Եւրոպան պէտք է հրաժարվի ծովային ցոյցից ու ճնշում չը գործի։ Մնում է միայն հարց առաջարկել. «ո՞ւմն են կամենում յիմարացնել» համոզված լինելով, որ Եւրոպան մտադիր չէ հնազանդվել Թիւրք փաշաների հրամաններին։

«ԳՈԼՈՍ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Գոլօս» լրագրին Կ. Պոլսից սեպտեմբերի 30-ից գրում են հետևեալը։ Աբդուլ-Համիդի բռնած խելագար ընթացքը միացեալ Եւրոպայի դէմ հանելուկ է դարձել ամենքի համար։ Ասում են, որ այդպիսի վարմունքի պատճառը բուական խելացի Մուսուրուս և Նուզրէդ փաշաներն են, որոնք այժմ վայելում են սուլթանի հաւատարմութիւնը։ Բայց այդ հանելուկը մեկնելու համար հարկաւոր է գնահատել այդ մարդկերանց ընդունակութիւնները և քննել նրանց առանձնական քաղաքական ձգտումները։

Այդ երկու մարդիկ նրանց թւիցն են, որոնք Թիւրքիայի առաջադիմութիւնը կապված են համարում «սահմանադրական-ազատամիտ» Մուրադի նորից գահ բարձրանալու հետ։ Այդ պատճառով նրանց համար ամենաձեռնտու քաղաքականութիւնը այն է, որ ամենակարճ ճանապարհով անխելք Աբդուլ-Համիդին կորուստ կը պատճառի։ Մեր ասածները ապացուցանելու համար կը յիշենք այդ մարդկերանց մտաւոր անցեալը որոնք հետևում էին վերոյիշեալ ձգտումներին իրանց կեանքը վտանգի ենթարկելով։

Երևի դեռ ամենքը յիշում են, որ Մուրադ V-ին գահընկէց անելուց և Բեշիկ-տաշի պալատի մէջ կալանաւորելուց յետոյ, խստութեամբ պահպանված կալանաւորի մօտ զէնքը ձեռքին նրա ընկեր Ալի-Սուաւի-էֆէնդին և 60 համախոհների օգնութեամբ կամենում էր ազատել Մուրադին և տանել Սկուտարիի ափերը, որտեղ նրան սպասում էին Մուրադի անունով խռոված սուլթանի գվարդիայի երկու բատալիօն զորքեր։ Մուրադին նորից գահ բարձրացնելու փորձը չաջողվեցաւ և թէ Ալի-Սուաւի-էֆէնդի և թէ նրա համախոհները նոյն տեղը ջարդվեցան, բայց գործը դրանով չը վերջացաւ։ Ալի-Սուաւիին միայն գործիք համարելով, սկսեցին փնտռել իսկական մեղաւորներին, որոնք Նուզրէդ և Մուսուրուս փաշաներն էին։ Երկուսն էլ ենթարկվեցան գաղտնի դատարանին, որի նախագահը դատաւորներից «ամենազնիւը» Միդհատ-փաշան էր։ Միդհատ-փաշա հաւատարիմ մնաց Թիւրքաց դատարանի աւանդութիւններին և երկու մեղադրվածներն էլ «չարաչար բամբասված» յայտնվեցան։

Ահա այդ «բամբասված» բարեկամները միացել են այժմ պետական կառավարութեան ղեկի մօտ և փոխանակ միայն Աբդուլ-Համիդի վիճակը վճռելու, նրա հետ միասին անդունդն են գլորում և պետութիւնը. Սուլթանի ապահովութեան պաշտպան և իր առելի թշնամի Օսման-փաշային փոխարինելով, Նուզրէդ-փաշա հաւատացնում է սուլթանին, որ նա կարող է իր ժողովրդի հաւատարմութեան վրա վստահ լինել միայն այն դէպքում, երբ կը պաշտպանի մահմետականների առաջնորդի արժանաւորութիւնը։ Այդ մոլորութեան մէջ սուլթանին պահելու համար խորամանկ չերքէզը վկայ է բերում Մուսուրուս-փաշային, որին իբր թէ եւրոպական քաղաքականութիւնը աւելի լաւ յայտնի է, քան թէ իրանց եւրոպացիներին։ Իսկ Մուսուրուս-փաշա անդադար կրկնում է. «երդվում եմ իմ տիրոջ գլխով, որ եւրոպացի դեսպանները այնպիսի ժողովուրդ են, որ երբէք «աննշան» գեավուրների պատճառով պատերազմ չեն սկսի»։ Սրանից յետոյ մի՞թէ սուլթանը իրաւունք չունի յամառել և Եւրոպայի հետ բարձրից խօսել։ Բայց դուք կը տեսնէք, թէ ի՞նչ կանեն իրանց «տիրոջը» նրա այժմեան երկու «խոնարհ ծառաները», որոնք յարմար րոպէ կը գտնեն սուլթանին խելագար յայտնելու համար։

Այս բոլորից երևում է, թէ Եւրոպան ի՞նչպէս ստորացնում է իր արժանաւորութիւնը և ի՞նչպէս անպատուում է իրան դիմող ժողովուրդներին, թոյլ տալով իրան հետ կատակ խաղալ երկու բաղդախնդիրներին, որոնք ընդհանուր եւրոպական քաղաքականութեան օգնութեամբ կամենում են իրանց անձնական նպատակներին հասնել։

Թիւրքիան ոչ թէ միայն արտաքին, այլ և ներքին գործերի մէջ հետևում է այդ խելագար քաղաքականութեանը։ Ոչ մի ազգութիւն չը մնաց, որի վրա չը յարձակվէր կառավարութիւնից հրահանգներ ստացող Թիւրքաց պաշտօնական մամուլը։ Մամուլին օգնում են կառավարիչները։ Օրինակ, նորերում պատրիարք Ներսէսը արդարութեան մինիստրից հրաւէր է ստանում այլ ևս գործ չը դնել «Արմէնիստան» բառը իր պաշտօնական թղթերի մէջ։

Այդ գրութիւնը գերմանական դեսպան կոմս Հացֆելդտին ուղարկելուց յետոյ պատրիարք Ներսէսը յանձնեց իր լրագրի խմբագրին գնահատել այդ դոկումենտը ըստ արժանոյն։ Միւս օրը «Մասիս» լրագրի մէջ տպվեցաւ մինիստրի կարգադրութիւնը խմբագրութեան հետևեալ ծանօթութեան հետ. «ի զուր չէ ասում առածը, թէ երբ այծի մէջքը քոր կը գայ, նա իր մէջքը գնում հովւի փայտով կը քորի»։ Այդ ակնարկութիւնը բաւական հասկանալի է, որովհետև եւրոպական նաւատորմը կանգնած է Թիւրքաց ափերի մօտ նոյնպէս և «Արմէնիստանի» շահերը պաշտպանելու համար, որի ոչնչացնելը պահանջում է արդարութեան մինիստրը։

Իր խորհրդատուներին անձնատուր եղած, այնուամենայնիւ, ինչպէս ասում են, սուլթանը երբեմն երբեմն գործերի դրութեան վրա խելացի կերպով է նայում։ Օրինակ նրանցից մէկին սուլթանը նորերումս նկատեց, որ չեռնոգորցիների հետ գործը պէտք է վերջացնել, ինչպէս խելագար (դէլի) ժողովրդի հետ։ Նուզրէդ-փաշա պատասխանեց, որ այդ ոչինչ նշանակութիւն չունի, քանի որ ինքն էլ դէլի-Նուզրէդ է կոչվում։ Ահա այսպիսի սրախօսութիւններով են զբաղեցնում ողորմելի Աբդուլ-Համիդին այնպիսի րոպէում, երբ վճռվում է ոչ թէ միայն նրա, այլ և Օսմանեան պետութեան բոլոր ժառանգների վիճակը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 6 հոկտեմբերի։ «Standart» լրագրին հեռագրում են Աթէնքից. յունական կառավարութիւնը մտադիր է դիմել պետութիւններին մի շրջաբերականով, որի մէջ կը յայտնի, որ եթէ յունական խնդիրը վերջնականապէս չի լուծվի յայտնի ժամանակամիջոցի ընթացքում, նա ստիպված կը լինի գրաւել իրան վիճակված նահանգները։

Կ. ՊՕԼԻՍ, 6 հոկտեմբերի։ Պատրիարք Հասունը կուղևորվի Հռոմ պապից կարդինալական գլխարկ ընդունելու համար։ Հասունը կը մնայ Հռոմի մէջ։

ԲԵՐԼԻՆ, 6 հոկտեմբերի։ Գերմանական բանկը $5^1/_2$% պարտամուրհակների տոկոսը պակասեցրեց մինչև $4^1/_2$։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ